

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ
(բանասիրական գիտությունների դոկտոր)

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՊԱՅՔԱՐԸ ԹՈՆԴՐԱԿՅԱՆ ԱՂԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԴԵՄ[1]

«Մի այլ Յունաստան, մի՛ բնաւ ինքնապարծ ճոխասցի յիւրն Որփէոս կամ՝ ի Հոմերոս, և մի՛ Իտալիա ի Վիրգիլիոս կամ յՈվրիդիոս, զի վեհ քան զնոսա ատ Հայաստանեայքս ծագեաց երանաշնորհն Գրիգորիոս, որ գիտեաց զապրստամբ հոգին բանաստեղծութեան հնազանդել ընդ թևօք աստուածայնոյ հոգւոյն...»:

Տ. Հ. Գաբրիէլ Աւետիքեան

Հայտնի է, որ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հաստատվելուց հետո (301 թ.), առաջին դարերից ի վեր, նրա դեմ ծառանում են հնից եկող հեթանոսական, զրադաշտական, հերձվածողական ընդդիմադիր ուժեր: Դրանք, արտաքին և ներքին այլ դժվարին հանգամանքների հետ միասին, մեծապես վնասում են հայ ժողովրդի հավատքի և հայրենիքի միասնության ամրապնդման, նրա կրթական, լուսավորական վերընթաց շարժման գործին: Աղվանից, Սյունյաց, Վասպուրականի, Արարատյան դաշտավայրի տարածքներում երևան են գալիս կռապաշտական, դիվապաշտական խորհուրդներ, որոնց դեմ հետևողականորեն պայքարում են հայոց հոգևոր և իշխանական դասերի նշանավոր գործիչները՝ առաջնորդելով ժողովրդին: Եզնիկ Կողբացին իր «Եղծ աղանդոց» պատմա-փիլիսոփայական երկում գիտականորեն հերքում է կռապաշտական, հերձվածողական աղանդը՝ «սուտ կրոն», «խոտոր հավատք»,

[1] Այս մասին զեկուցում է կարդացվել Մատենադարանի գիտական նստաշրջանում (25 հունվարի 1990 թվական):

«կախարդանք», «հերետիկոսություն» կոչելով այն. «Կեղծաւոր կրօնաւոր՝ պատրուակ է սատանայի,— գրում է նա,— ընդ իւրեան ունելով զսատանայ, զզազրութիւն անդամոյն, ծածկէ և նկարակերպ պարուրակօք պատրէ զտեսողսն: Սոքա են գայլք գառնազգեստ, որոց սպառնացաւ Քրիստոս ընդ անհաւատսն դասել»[2]: Մովսես Խորենացին, իր «Հայոց պատմութիւն» դարագլխային աշխատության մեջ, սրտի անհուն կսկիծով ու ողբով է ներկայացնում հայ ժողովրդի պետականության կորուստը և քրիստոնեական հավատքի մեջ բացված այդ վիհը. «Ողբում եմ քեզ հայոց աշխարհ... բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնիդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանայդ... խանգարվեց հայոց խաղաղությունը, հիմնավորվեց տգիտությունն ու չարափառությունը, հեթանոսական մոլորությունը... Այժմ,— շարունակում է հանճարեղ պատմագիրը,— ներսը կռիվներ, դրսից՝ արհավիրք: Արհավիրքը հեթանոսների կողմից և կռիվները հերձվածողների կողմից»[3]: Կորյունը գրում է թե՝ սատանայական, հերձվածողական այդ աղանդի դեմ ինչպիսի՞ պայքար է ծավալում հանճարեղ Մեսրոպ Մաշտոցը՝ իր թարգմանիչ աշակերտների հետ միասին՝ կրթական, լուսավորական առաքելությունների ժամանակ. «Եւ առեալ հաւատացեալսն,—գրում է Կորյուն իր ուսուցչի մասին,—իջանէր յանկարգ և հանդիման տեղին Գողտն: Այլ ընդառաջ ելանէր նմա իշխան Գողթայ, այր երկիւղած և աստուծասէր, ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի: Իսկ երանելոյն վաղվաղակի զաւետարանական արհեստն ի մէջ առեալ արկանէր զգաւազանովն գրեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոց և ի սատանեական դիւապաշտ սպասաւորութենէ՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր»[4]:

Հայոց քրիստոնեական «Եկեղեցու սուրբ ուխտի» գաղափարը, որ այնքան խորունկ և գեղագիտական բարձր արվեստով ներկայացնում է անմահ Եղիշեն իր Վարդանանց պատերազմի պատմության մեջ, «Սուրբ ուխտ, որ միավորում էր հայ հոգևոր-եկեղեցական, իշխանական և ժողովրդական առաջադեմ դասերին՝ ընդդեմ կռապաշտ պարսկական զավթիչների, ոգեկոչել ու առաջնորդել է հայ ժողովրդին այլակրոն, այլադավան, աղանդավորական շարժումների դեմ՝ նրա մղած պայքարի բոլոր ժամանակներում:

Եվ այսպես 4-րդ—5-րդ դարերից ի վեր հայոց քրիստոնեական հավատքի դեմ ծառանում են հերձվածողական, կռապաշտական, աղանդավորական շարժումներ, որոնք տատանումներով, գունափոխումներով իրենց գոյությունը հասցնում են մինչև նոր ժամանակները.

Երկիւղ չիք՝ բաց ի գայլ դիւաց,
Եւ ի աղուէս հերձուածողաց,
Հերքե՛ա զհոյլս հերձուածողաց,
Եւ փաղուգս գայլոց դիւաց...[5],—

գրում է 18-րդ դարի աղանդավորական շարժումների դեմ, երկրորդ Մատեան ողբերգութեան հեղինակ, բանաստեղծ Պետրոս Նախիջևանցին իր «Երգարան կոչեցեալ Յիսուս փեսայ...» ընդարձակ պոեմում:

Ցավոք այսօր էլ դեռ ծնվում են հակաքրիստոնեական, աղանդավորական առանձին խմբեր, որոնք խանգարում են համայն հավատացյալ հայության Կաթողիկե եկեղեցու՝ սուրբ Էջմիածնի կրոնաազգային վերընթաց գործունեությանը:

Հայտնի է, որ աղանդավորական շարժումների պատմության մեջ առավել քան ծանր հետք են թողել թոնդրակյանները: 9—11-րդ դարերում Հայաստանի տարբեր հատվածներում արմատավորվում և տարածվում է Մանիկյան, Պավլիկյան աղանդների ծնունդ թոնդրակյան շարժումը, որը ազգային քողի տակ, ձգտում է առավել քան շեղել հայոց կրոնաազգային կյանքի պատ-

---

[2] Եզնիկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 210:

[3] **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, աշխ. թարգմանություն Ստ. Մալխասյանցի, Երևան, 1901, էջ 313, 314:

[4] Մատենագիտութիւն նախնեաց, Վենետիկ, 1894, էջ 15:

[5] Մատենադարան, ձեռ. № 6744, թերթ 12բ:

մական զարգացման ընթացքը: Միջնադարյան բազմաթիվ նշանավոր գործիչներ՝ Հովհան Օձնեցի, Ստեփանոս Ասողիկ, Ստեփանոս Տարոնացի, Անանիա Նարեկացի, Գրիգոր Նարեկացի, Արիստակես Լաստիվերտցի, Գրիգոր Մագիստրոս, Ներսես Շնորհալի, Սմբատ Գունդստապլ և այլք, աչքի առաջ ունենալով իրենց նախնիների փորձը, մաքառում են վերոհիշյալ աղանդների դեմ և իրենց առանձին երկերում՝ թղթեր, կանոններ, պատմագիտական, բանաստեղծական աշխատություններ և այլն, այդ աղանդների վերաբերյալ թողնում են թանկագին վկայություններ՝ ականատեսի, պատմագրի, բանաստեղծի, արտառուչ նկարագրություններ...: Ներսես Շնորհալին «Թուղթ ի Սամոսատիա քաղաք, յաղագս Արևորդացն դարձի» խորագրով իր նամակում բնութագրում է հնից եկող կռապաշտական աղանդը և միաժամանակ իր ուրախությունը հայտնում շատ մոլորյալ զավակների դարձի առթիվ: «Զի որպէս յազգն Հոռոմոց Պողոմելոսքն անուանեալք մնացին խաւարեալք ի լուսոյ Աւետարանի փառացն Քրիստոսի և թաքնաբար ունելով ի սիրտս զաղանդն սատանայի՝ ո՛չ հնազանդեցան Առաքելոցն քարոզութեանց, այսպէս և Արեւորդիքդ յազգս մեր ի մասին սատանայական խաւարին մնացեալք, ո՛չ կամեցան լուսաւորել աստուածային լուսովն, և ի ձեռն Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, այլ սիրեցին զխաւար և ո՛չ զլոյս մինչեւ ցայսօր ժամանակի: Եւ թէ ի նուազեալ բարեաց ժամանակս մեր ողորմեցաւ Աստուած նոցա, և եբաց զխաւարեալ աչս հոգւոց նոցին՝ հրաժարել ի սատանայէ, և դիմել առ Աստուած ո՛չ խաբէութեամբ, այլ ճշմարտութեամբ, գոհութիւն գթութեանն Աստուծոյ մատուցուք»[6]:

Սմբատ Գունդստապլը իր «Դատաստանագրքի» օրենքների մեջ պատժի հատուկ հոդված է սահմանում աղանդավորների դեմ. «Զի թէ որ զՔրիստոս անարգէ, նոյն է Ս. Եկեղեցի և զխաչն, և զխորհուրդն, և մկրտութիւն և թէ անօրէն լինայ, նա մեր է վրէժխնդրութեան և թէ Քրիստոսէ է, եկեղեցին քննէ և զոր պարտն է ի դարպասն տայ, որ դատէ»[7]:

Հիշատակության արժանի է նաև պատմական մի այլ իրողություն: Քրիստոնեական, առաքելական եկեղեցու՝ ի սկզբանե մղած դավանաբանական պայքարի պատմության, Նիկիո տիեզերական ժողովի (325 թվ.) ընդունած կանոնների ոգուն համաձայն, բոլոր հերձվածողական, աղանդավորական շարժումների դեմ մղվող պայքարի ընթացքում երևելի անձանց կողմից առաքվել են պաշտոնական թղթեր, ուղերձներ, որոնք դարից-դար փոխանցվելով հասել են մեր ժամանակներին և տպագրվել «Գիրք թղթոց» (Պոլիս, 1901 թվ.) և «Կնիք հաւատոյ» (Էջմիածին, 1914 թվ.) անվանումներով ժողովածուներում: «Այստեղ պարզ է ասված,— գրում է «Կնիք հաւատոյ» ժողովածուի ընդարձակ առաջաբանի հեղինակը,— որ այն կազմվել է դեռևս 7-րդ դարում՝ «Անձինք նուիրեալք» սքանչելի երգի հեղինակ Հայոց Կոմիտաս կաթողիկոսի ջանքերով: «Ս. հոգւոյ շնորհօք,—շարունակում է հրատարակիչը,—առանձնապես օժտեալ եկեղեցական հայրերի դաւանաբանական գրուածքներից յարմարագոյն կտորներ ընտրելով և ի մի բերելով, որպէսզի հարկաւոր դէպքում, իբրև վկայութիւն բերուին սուրբ հաւատի պաշտպանութեան և հերձուածողների մոլորութիւնները հերքելու համար»[8]:

Նոր ժամանակների մատենագիտության մեջ հայ և այլազգի բազմաթիվ գիտնականներ ուսումնասիրել, հետազոտել են ձեռագիր և տպագիր աղբյուրները և ստեղծել աղանդավորական շարժումների մի վիթխարի քննական պատմություն: Հատկապես հայ գիտնականներ՝ Ե. Տ. Մինասյանը, Ա. Գ. Հովհաննիսյանը, Մկ. Մկրյանը, Ա. Ղանալանյանը, Մ. Աբեղյանը, Ստ. Մելիք-Բախշյանը, Բ. Առաքելյանը, Հր. Բարթիկյանը, Վ. Նալբանդյանը, Լ. Խաչերյանը և

---

[6] **Ներսես Շնորհալի**, Թուղթ ընդհանրական, Երուսաղեմ, 1871, էջ 223—224:

[7] **Սմբատ Գունդստապլ**, Դատաստանագիրք, Էջմիածին, 1918, էջ 44:

[8] Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ... Ս. Էջմիածին, 1914, էջ XI:

այլք, իրենց առանձին աշխատություններով նպաստել են ամբողջացնելու աղանդավորական շարժումների խորհրդային շրջանի պատմությունը: Նկատելի է սակայն, որ այդ պատմությունը օգտակար լինելու հետ միասին, ամբողջության մեջ ունի վերոհիշյալ աղանդների ծագման, զարգացման ընթացքի, **հատկապես նրանց գաղափարախոսության գնահատման հարցերում,** նրանց ազգային ակունքների՝ միմյանց հետ ունեցած կապի, փոխազդեցությունների և այլ խնդիրների վերաբերյալ հույժ իրարամերժ, հակասական, հաճախ նաև պատմավրեպ մեկնաբանություններ:

Մեր նպատակներից հեռու է հայոց առաքելական եկեղեցու դավանաբանության հետ սերտորեն առնչվող աղանդավորական շարժումների պատմության քննությունն՝ ամբողջության մեջ: Այս կարևոր հարցի նորովի ուսումնասիրությամբ պետք է զբաղվեն հայոց հին և միջին դարերի պատմության, տնտեսագիտության, փիլիսոփայության մասնագետները՝ ամենայն խորությամբ: Մենք այստեղ շոշափելու ենք այդ ամբողջության հետ կապված մի մասնակի խնդիր միայն: Այն բխում է մեր ուսումնասիրության ընթացիկ ծրագրային նյութից (թեմայից), որը կրում է «Գրիգոր Նարեկացին և 18-րդ դարի լուսավորականները» խորագիրը:

***

Հայտնի է, որ նարեկացիագիտությունը մի նոր և համակողմանի զարգացման փուլի մեջ է մտնում 18-րդ դարում: «Մատեան ողբերգութեան» երկը տպագրվում է ավելի քան տասն անգամ: Հայտնի է նաև, որ «Մատեան ողբերգութեան» երկի առաջին քննական լիակատար մեկնությունը, ներառյալ հեղինակի մի շարք ճառերի, ներբողների, կատարվում է այդ ժամանակամիջոցում և տպագրվում Պոլսում՝ 1745 թվականին. «Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակական վարդապետին... շարադրեալ և մեկնեալ մեծաւ զգուշութեամբ և շրջահայեցութեամբ ի Յակոբայ արքեպիսկոպոսէ և պատրիարգէ Կոստանդնապօլսոյ աստուածաբան կոչեցելոյ»: Այս մեկնությունը, հիրավի, հայագիտության աննախընթաց նվաճումն է: Հակոբ Նալյան Նարեկագետը հաշվի առնելով «Մատեանի» նախորդ դարերից եկող և շարունակվող անչափելի ներգործությունը ժողովրդական լայն խավերի և մտավորականության իմացական աշխարհի վրա, հաշվի առնելով նաև «Մատեանի» մի շարք բանքերի դավանաբանական բնույթը, առաջին անգամ հայ նոր մատենագիտության պատմության մեջ շոշափում է «Մատեանի» առնչության հարցը նաև թոնդրակյան աղանդավորական շարժման հետ: Նարեկագետը մեկիկ-մեկիկ բացատրում է հայոց քրիստոնեական առաքելական եկեղեցու դավանաբանական հիմունքները՝ ընդդեմ նախորդ դարերից եկող և 10-րդ դարում դեռևս զարգացող թոնդրակյան աղանդավորական շարժման գաղափարախոսության: Հայտնի է նաև, որ Նարեկացին, թեև հասկանալի պատճառներով «Մատեանում» թոնդրակեցիների անունը չի հիշատակում[9], սակայն աղանդավորական ժամանակակից այդ շարմժան վերաբերյալ նա իր հայացքները արտահայտում է այնքան բացորոշ ու հստակ, որ «Մատեանը» ընդօրինակող առանձին գրիչներ (ինչպես նաև «Մատեանի» առանձին մեկնիչներ, հրատարակիչներ) դավանաբանական հարցեր քննելիս, երբեմն համապատասխան բանքերի խորագրերում իսկ հիշատակում են «թոնդրակեցիներ» բառը: Նալյանն իբրև «Մատեանի» առավել ընդարձակ մեկնության հեղինակ, այս հարցում ևս հանդես է բերում հատուկ մոտեցում: Նա բացահայտում է «Մատեանի» առանձին բանքերում Նարեկացու բարձրացրած հակաթոնդրակյան բոլոր հարցերը, հաճախ առնելով նաև առանձին խորագրերի տակ: Այս կերպ Նալյանը օգնում է ընթերցողին վերահասու լինելու թե «Մատեանի» ո՛ր բանքերում ո՛ր հարցն է վերաբերում թոնդրակյան աղանդին, որոնք և ընդդիմադիր են

[9] Այս փաստը հիշատակում են նաև՝ Գ. Ավետիքյանը իր «Նարեկլուծում» և «Մատեանի» 1985 թ. հրատարակիչները՝ նարեկագետներ Պ. Խաչատրյանը և Ա. Ղազինյանը իրենց ծանոթագրություններում:

հայոց հնից եկող դավանաբանական օրենքներին: Այս առումով Նալյանի մոտ հատկապես ուշագրավ է ՀԵ բանքի մեկնությունը, ուր մատենագետը առանձին հարցադրումներով քննում է առաքելական եկեղեցու դավանաբանական հարցերը և դատապարտում թոնդրակյան աղանդը, մերժում նրա մոլորությունները. «Սոյն գլուխս է,— գրում է Նալյանը,—նախադրութիւն առաքելական, որք հոգով սրբով կանոնիցին զսահմանս հաւատոյ, առ ի լուսաւորութիւն նորընծայ հաւատացեալ եկեղեցւոյ ժողովրդեան... յաւելու զնիւթեղէն եկեղեցւոյ խորհուրդսն մեկնաբանեալ ընդդէմ պօլիկեանց, այսինքն պիղծ թոնդրակեցւոց, երկրորդ Մանիքեցւոց, որք զնիւթեղէն և քարանց և ի փայտից զկառուցեալ եկեղեցիս և զխորհրդաձութիւնսն եկեղեցւոջ ծաղր առնէին»[10]:

Ավելին, Նալյանը «Մատեանի» այս և մյուս բանքերի դավանաբանական դրույթների հիման վրա քննադատելով թոնդրակյան աղանդը, միաժամանակ շեշտում է այն ճշմարտությունը, համաձայն որի Նարեկացին իր «Մատեանում» ո՛չ թե մերժում կամ վերափոխում է հնից եկող և գոյատևող առաքելական եկեղեցու հավատքի կանոնները, ծեսերը, ո՛չ թե քննադատում կամ լրացնում է Նիկիո ժողովին եկեղեցական, դավանաբանական օրենքները, այլ միայն և միայն պարզաբանում, գնահատում, մեկնում է՝ հաշվի առնելով թոնդրակյան աղանդի հետևանքով և առհասարակ հայոց կրոնական, հասարակական, պետական իշխանական ներքին և արտաքին կյանքում ստեղծված բարդ իրադրությունները:

Հիրավի Նարեկացին չի թաքցնում իր վերաբերմունքը, նա բացորոշ ասում է. «Զոր ի/ նախնին հառեալ եւ յերկրորդումս ցուցից».

Արդ, այսոքիկ թշուառացեալ
շնչոյս իմոյ իղձք
Եւ առ քեզ դաւանութիւնք
յարմարականք,
Որ բովանդակեա բանիւ
զամենայն, Աստուած,
Զոր ի նախնին հառեալ՝ եւ
յերկրորդումս ցուցից[11]:

Նարեկագետ Նալյանը հաշվի առնելով հարցի բարդությունը ամենայն ջանք գործադրում է, որպեսզի ընթերցողը ճիշտ հասկանա Նարեկացուն. «Ուրեմն, մի ասիցեն թէ, ահա և սուրբն Գրիգոր, յաւէլ ի դաւանութիւնն Նիկիոյ,— բացատրում է Նալյանն այս անգամ իր խոսքն ուղղելով Նարեկացու հակառակորդ կղերամիտներին,— զի ոչ յաւէլ՝ այլ զմիտն յանախեցոյց, զի այլ է յաւելացուցանել և այլ է ըստ նոյն մտաց զբանսն ճոխացուցանել և յանախացուցանել...», «Վերջապէս ծանի՛ր,—դարձյալ կըրկնում է Նալյանը,— զի դաւանութիւն սրբոյն Գրիգորի ո՛չ է տարաձայն ի Նիկիական դաւանութենէ, այլ է մեկնութիւն նմին և յանախութիւն միայն և ո՛չ հանդիսապէս յեկեղեցոյ ընթեռնանելի, այլ՝ առանձին և ըստ ջերմեռանդութեան սիրոյն, որ սուրբ վարդապետն սկսանի այսպէս՝ «Խոստովանիմք և դաւանիմք»[12]: Իսկ ինչ էր ներկայացնում Նիկիո ժողովի որոշումը, որն էր նրա բուն խորհուրդը, ինչ գաղափարներ էին մարմնավորում այդ ժողովի կանոնները՝ քննարկվող հարցի առնչությամբ: Ամենակարևորը այն է, որ Նիկիո 325 թվականի և Կոստանդնուպոլսի 381 թվականի ժողովներում դատապարտվում էին աղանդավորա-

---

[10] **Հակոբ Նալյան**, Գիրք մեկնութեան..., էջ 272, 557: Այս առումով ուշագրավ է նարեկացիագետ Պ. Խաչատրյանի վերջերս հրատարակած «Նարեկի միջնադարյան լուծմունքը» աշխատությունը, ուր 10-րդ գլուխը (էջ 170—180) նվիրված է միայն «Մատեանի» դավանաբանական հարցերին: Նալյանից հետո Հ. Գ. Ավետիքյանն է, որ իր «Նարեկ աղօթից համառօտ և զգուշավոր լուծմունք...», ծանրակշիռ աշխատության մեջ անդրադառնում է, «Մատեանում» շոշափված դավանաբանական հարցերին և իր քննադատական վերաբերմունքը հայտնում Թոնդրակյան աղանդավորական շարժման մասին: Ավետիքյանի տեսակետները համահնչուն են Նալյանի դրույթներին (տե՛ս հատկապես ԼԴ, ՀԵ և ՂԲ բանքերի ծանոթագրությունները Նալյանի և Ավետիքյանի մոտ):

[11] **Գրիգոր Նարեկացի**, «Մատեան ողբերգութեան», Երևան, 1985, էջ 385 (Բանք ԼԴ):

[12] **Հակոբ Նալյան**, Գիրք մեկնութեան աղօթից..., էջ 268, 272:

կան, հերձվածողական բոլոր մոլորությունները և ընդունվում դավանաբանական կանոններ, որոնք պարտադիր էին քրիստոնյա բոլոր եկեղեցիների համար. «Միևնոյն դաւանութիւնն էր որ,— գրում է Մ. Օրմանյանը,— չորրորդ դարուն մէջ բոլոր եկեղեցիները կմիացնէր, և Արևելք ու Արևմուտք հաւատոյ և սիրոյ կատարեալ հաղորդակցութեան մէջ էին: Այդ միջոցին երևեցան,— շարունակում է գիտնականը,—մոլորութիւնները, ինչպէս եղան Արիանոսներու և Մակեդոնիաներու հերետիկոսութիւնները, ընդհանուր եկեղեցւոյ համաձայնութեամբ դատապարտուեցան Նիկիոյ (325) և Կոստանդնուպօլսոյ (381) ժողովներու մէջ, և Հայոց եկեղեցին ալ կատարելապէս այդ ժողովներուն դաւանութիւնն ու որոշումներն ընդունեցաւ»[13]: Այս միևնույն հարցն էր անհանգըստացնում Եզնիկ Կողբացուն, Մովսես Խորենացուն, Մեսրոպ Մաշտոցին, Կորյունին և այլոց, ինչպես նկատեցինք մեր շարադրանքի սկզբում...:

Ահա հայոց քրիստոնեական, առաքելական եկեղեցու, նրա դավանաբանական միասնական հիմքերի դեմ էր ուղղված նաև թոնդրակյան աղանդավորների շարժումը և այդ շարժման դեմ էր պայքարում հանճարեղ Գրիգոր Նարեկացին՝ 10-րդ դարում, շարունակելով իր նախորդների գործը:

Ինչպես նկատեցինք արդեն, Հակոբ Նալյան նարեկագետն էր առաջինը, որ մեկնաբանում ու գնահատում է Նարեկացու հակաթոնդրակյան գաղափարախոսությունը՝ «Մատեանի» ընձեռած դավանաբանական հարցերի հիման վրա: Ուշագրավ է, որ Նալյանը այդ բոլորը հիմնավորում է նաև իրեն հայտնի պատմական այլ սկզբնաղբյուրների փաստերով, հատկապես Արիստակես Լաստիվերտցու «Հայոց պատմության» և Գրիգոր Մագիստրոսի «Թղթերում» թոնդրակյան շարժման վերաբերյալ եղած նյութերով, ինչպես կտեսնենք նաև ստորև:

Ըստ Նալյանի, նույն աղանդի դեմ է ուղղված նաև «Մատեանի» ՂԲ բանքը (որն իր մոտ ներկայացվում է իբրև ՂԵ բանք). «Նախ թուի ինձ,—գրում է Նալյանը,—թէ սուրբ վարդապետս ընդդէմ պիղծ թոնդրակեցւոց արտադրեալ է զճառս, զի նոքա որպէս զեկեղեցի, այսպէս և զժամհարի ըզփայտն իբրև զաւելորդապաշտութիւն քամահրէին. ընդդէմ որոց սուրբ վարդապետս կարգէ զճառս, զխորհրդածութիւն փայտին թարգմանելով...»[14]: Նալյան նարեկագետի համար դժվար չէր հանգելու գաղափարական այն եզրակացության, համաձայն որի թոնդրակյան աղանդավորական շարժումները ոչ թե ծնունդ են առել քրիստոնեական առաքելական եկեղեցու կարգերը բարեփոխելու, այլ՝ ի սպառ վերացնելու: «Անարգեն զխաչ և զեկեղեցի և զգեստ քահանայական, և զպատկերս ոչինչ համարելով... և այլ բազում հայհոյութիւն սուրբ կոյսն Աստուածածին»[15]: Նալյանը սկզբնաղբյուրների հիման վրա բացում է «Մատեանի» բանաստեղծական տողերի ներքին բոլոր փակագծերը: Եկեղեցու նյութական դերը մերժելու նպատակով թոնդրակեցիները բացականչում էին, թե «Մենք ո՛չ ենք նիւթապաշտ, այլ՝ աստուածապաշտ»[16] և այդ լոզունգի տակ տարբեր խավերի ներկայացնող թոնդրակյան գործիչները ծածկում էին իրենց անբարոյական կենցաղավարությունը: «Իսկ այս Կուծիկս,—գրում է Նալյանը, քաղելով Մագիստրոսի Թղթերից համապատասխան տողեր,—որսացաւ զկին մի Հրանոյշ անուն, որ էր ի գլխաւոր և յընտիր ազգէ և տէր ագարակի և սահմանակից նորա ո՛չ շատացաւ իւրով կորստեամբն, այլ շարունակեաց ըզբազումս սատար եղաւ խաբիցն զերկու կանայս տոհմակիցս նորա կոչեցեալ՝ Ախին և Կամար անուամբն՝ քորք հարազատք, սոքա պոռնկական ախտի և կախարդական արուեստիս վարդապետք եղեն սատանա-

---

[13] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան,** Հայոց եկեղեցին և իր պատմութիւնը, Պոլիս, 1911, էջ 40:

[14] **Հակոբ Նալյան,** Գիրք մեկնութեան աղօթից..., էջ 711:

[15] **Հակոբ Նալյան,** Գիրք մեկնութեան աղօթից..., էջ 530:

[16] **Հակոբ Նալյան,** նույն տեղում, էջ 557:

յի, յորս զօրացաւ հայրն ամենայն չարեաց»[17]:

Թոնդրակեցիները մերժում են Քրիստոսի ուսմունքն ամբողջությամբ, Աստծո տունը ճանաչված Կաթողիկե առաքելական եկեղեցին՝ հայոց եկեղեցին, նրա դավանանքը, սովորույթները, ծեսերը, արարողությունները: Թեև Նալյանը իրավացիորեն (հակառակ մեր օրերի մի շարք հայագետների), միանգամայն անքննադատ վերաբերմունք ունի Լաստիվերտցու և Մագիստրոսի աղբյուրագիտական նյութերի նկատմամբ, սակայն այստեղ կարևորը «Մատեանի» և այդ նյութերի զուգադրության փաստն է, որով նարեկագետը նոր էջ է բացում նարեկացիագիտության և թոնդրակյան շարժման պատմության մեջ: Հենց այստեղ մենք ընդհատում ենք «Մատեանի» վերոհիշյալ բանքերի նալյանական մեկնությունների քննությունը, կրկին ու կրկին մեր զարմանքը և հիացմունքը հայտնելով Նալյան նարեկագետի բնագրագիտական անչափելի կարողության և գիտական խորն վերլուծությունների առթիվ: Բանն այն է, որ Նալյանը այնքան հմտորեն է ներթափանցել «Մատեանի» ներքին շերտերը, որ կարողացել է տեսնել ամբողջության մեջ խորապես քնարական-կենսափիլիսոփայական անհուն տարածք ունեցող այդ երկի պատմական աղերսները՝ ժամանակակից թոնդրակյան աղանդավորական, հակաքրիստոնեական շարժման հետ: Այստեղ է, որ Մխիթարյան անվանի գիտնական Հ. Գ. Ավետիքյանի բընութագրմամբ Նալյանի մեկնությունը «յայլ խօսս վարդապետականս կամ բանասիրականս»[18] կատարել է իր անգնահատելի դերը հայոց մատենագիտության համար (առաջին անգամ ներկայացնելով Նարեկացուն՝ իբրև թոնդրակյան աղանդի դեմ քրիստոնեության ճշմարիտ դրոշը պարզած առաջամարտիկի...): Ցավոք այս խնդիրը շրջանցել են նարեկագետները:

***

Առավել քան զարմանալի է և ուշագրավ նաև հետևյալ փաստը. Նալյանին հայտնի չի եղել, որ Նարեկացին դեռևս «Մատեանը» գրելուց շատ տարիներ առաջ է սկսել իր պայքարը թոնդրակյան աղանդի դեմ և որ այդ առթիվ գրել է հատուկ «Թուղթ»... ինչպիսի՞ անակնկալ, ինչպիսի՞ հայտնագործություն կլիներ նարեկագետ Նալյանի համար, եթե նրան հայտնի լիներ, որ ահա «Հայոց Պրոմեթեոսը» (այսպիսի կոչում է տալիս Նալյանը Նարեկացուն), «Մատեանը» գրելուց դեռևս շուրջ երկու տասնամյակ առաջ (թերևս 980-ական թվականներին), ծառացել է թոնդրակյան շարժման դեմ և գրել հատուկ «Թուղթ» Կճավա վանքի վանահորը՝ նրանց մոտ աղանդավորական շարժման արտահայտություններ տեսնելով առիթով. «Թուղթ ամենաշնորհ վարդապետին Գրիգորի Նարեկացւոյ, զոր գրեաց ի հոյակապ ուխտն Կճաւայ, վասն կարծեացն անիծեացն անիծելոց թոնդրակեանց Յանէսի և Յամրէսի, որ եկն զգեստիւ ոչխարաց եւ ներքոյ գայլ յափշտակող, որ եւ ի պտղոյ ծանուցաւ ամենից, զոր սուրբ վարդապետին լուեալ, գրեաց սակս ազատութեան ի չար կարծեացն»[19]:

Ուրեմն, «Մատեանի» վերոհիշյալ բանքերում շոշափված դավանաբանական հարցերն ունեն նաև Նարեկացու կյանքի ու գործունեության հետ կապված պատմական որոշակի հիմքեր, ահա կարևորը... Ուրեմն Նարեկացի հանճարը մարդ-բանականի, քրիստոնյա հայի հոգու և հավատքի, նրա ողբի և սթափման բազում հարցերի հետ կապված, նաև թոնդրակյան որոգայթի մասին, ասել է այն ամենը, ինչը խոր ընդունված էր ունեցել իր հոգում շատ տարիներ առաջ, և վերստին անդրադարձել «Մատեանում»՝—1002-1003 թվականներին՝ թոնդրակյան աղանդի դեռևս բուռն զարգացման շրջանում: Հանճարեղ քնարերգակը այս ան-

---

[17] **Հակոբ Նալյան**, նույն տեղում, էջ 556:

[18] **Հ. Գաբրիել Ավետիքյան**, Նարեկ աղօթից, Վենետիկ, 1859, էջ Ժ:

[19] **Հ. Բարսեղ վ. Սարգսեան**, Ուսումնասիրութիւն Մանեքէա-Պաւղիկեան թոնդրակեցիներու աղանդին եւ Գրիգոր Նարեկացւոյ Թուղթը», Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 106:

գամ բանաստեղծական առավել խորն ընդհանրացումներով է արտահայտում իր հակամարտությունը ազգային հավատքի ու հայրենիքի շահերի դեմ ուղղված թոնդրակյան աղանդի նկատմամբ: Նարեկացու «Թուղթը» և՛ բանասիրական-աղբյուրագիտական, և՛ գիտական-գաղափարական առումներով, բացառիկ երևույթ է: Այն նոր լույս է սփռում Նարեկացու հակաթոնդրակյան պայքարի և մի շարք հարակից հարցերի պատմության վրա: Հայտնի է, որ 9—10-րդ դարերը հայոց վաղ ֆեոդալիզմի զարգացման շրջան էր, արտաքին և ներքին առևտրատնտեսական, իրավաքաղաքական բուռն պայքարի ու միաժամանակ կրթական, լուսավորական վերընթաց շարժումների շրջան: Երեք հակադիր հոսանքներ միաժամանակ ձգտում էին ընդլայնել իրենց ազդեցությունների շրջանակները և հասնել տիրակալության: Դրանք էին՝ պահպանողական ուժերը, սահմանափակ կղերականներն ու իշխանական, պետական դասերի առանձին հետադեմ «սոպո և տգետ» ներկայացուցիչներ, հակաքրիստոնեական, հերձվածողական, աղանդավորական ներքին և օտարամուտ ուժեր և երրորդ՝ **հայոց հին և նոր պատմագիտության, արվեստի, աստվածաբանության, փիլիսոփայության, լուսավորության** ու կրթության առաջընթացով ոգեկոչված հոգևոր և աշխարհիկ, պետական, իշխանական և եկեղեցական դասերի նշանավոր գործիչները, քրիստոնեական ուսմունքի դրոշակակիրները: Տարակուսանքից վեր է, որ արաբական լուծը թոթափելուց հետո, 10-րդ դարը, այսուամենայնիվ, դարձավ հայոց ազատամիտ, կենսունակ ուժերի վերամիավորման, նրա հոգևոր և իմացական կյանքի վերածնունդի դար: Այս ժամանակամիջոցում, ահա, Նարեկա վանքը՝ արդեն հռչակված նշանավոր քաղաքների՝ Դվինի, Անի, Կարս, Կարին և այլոց հետ, բացել էր լուսավորության նոր հորիզոններ: Գրիգոր Նարեկացին, նրա հայրը՝ աստվածաբան-մեկնիչ Խոսրով Անձևացին, նրա հորեղբայրը՝ փիլիսոփա Անանիա Նարեկացին ընդհանուր առաջադիմության ձայնին ունկնդիր, հայոց ազգային հավատքի, քրիստոնեական, առաքելական եկեղեցու ճշմարիտ խորհուրդներով մաքառում էին և ներքին ծայրահեղ կղերամիտ պահպանողականների, հնից եկող հակաքրիստոնեական տրամադրությունների՝ կռապաշտների, հեթանոսների, նոր պավլիկյան-թոնդրակյան աղանդավորական, հերձվածողական շարժումների դեմ: Գրիգոր Նարեկացու Կըճավա վանքի վանահորը գրած «Թուղթը» պատմական այս իրադրության ծնունդն է: Միանգամայն ճիշտ է մխիթարյան գիտնական Հ. Բ. Սարգսյանի այն հայացքը, թե ըստ երևույթին Նարեկա և Կճավա վանքերը դավանաբանական առումով հակադիր իրավիճակի մեջ են եղել: Գրիգոր Նարեկացին բարեկամաբար զգուշացնում է Կճավա վանքի վանահորը վանքում մուտք գործած թոնդրակյան աղանդավորական տրամադրությունների առթիվ և հորդորում՝ անհապաղ պայքարել հավատքից շեղվածների դեմ: Նարեկացին իր «Թղթում» 14 կետերի մեջ ներկայացնում է թոնդրակյան աղանդի հակաքրիստոնեական բնույթը, հայոց առաքելական եկեղեցու սուրբ կանոնների, ծեսերի և արարողությունների դեմ նրանց թշնամանքը, արհամարհանքը. «Բազում ինչ աստուածային և առաքելական,—գրում է Գրիգոր Նարեկացին,—ամենայն ինչ ուրացեալ է ի նոցանէ և խափանեալ յաստուածային կարգաց: Զձեռնադրութիւնն, զորս Առաքեալքն ի Քրիստոսէ ընկալան: Եվ հաղորդութիւն մարմնոյ նորա... Եւ զծնունդն հոգեւոր երկանցն... Եւ զաւրհնարանեալ զաւր կիրակէին, յորում արար զլոյսն առաջին»: Նարեկացին նկատում է, որ նրանք իրենց մոլորությամբ գերազանցում են նույնիսկ կռապաշտներին. «Թէ զաւազանն ուրացեալ ի նոցանէ, յորում ինքն Քրիստոս մկրտեցաւ, թէ զհաղորդութիւն անմահութեան... Թէ զմարդապաշտ ուրացութիւնն, որ գարշելի է և անիծեալ քան զկռապաշտութիւն... Թէ զպսակին ամուսնութեան անզոսնութիւն... Թէ որ զգլխաւոր աղանդին իւրեանց գարշութեան յանդգնեալ Քրիստոս Անուանեն...»[20]:

[20] **Հ. Բ. Սարգսեան**, Ուսումնասիրութիւն..., էջ 108, 109, 110, 111:

Նարեկացու բողոքն ու ատելությունը թոնդրակյան շարժման, նրա հին ու նոր առաջնորդների, նրանց ուսմունքի, ծրագրերի ու գործի նկատմամբ խորն է և անսահման: Նա խոստովանում է, որ դեռ չի ասում այն ամենը, ինչ գիտե և ինչ որ գոյություն ունի... «Ամենևին նուազս յոքունց և սակաւս ի բազմաց գործադրեցի»[21],—գրում է նա: Նարեկացին խրախուսում է Կճավա վանքի վանահորը, որ նա ևս նզովի այդ անօրեններին, նրանց սկզբնահորը՝ Սմբատին, այդ դևին՝ Նեռին և նրա հաջորդներին, ոմն գիտնական անուն կեղծապատիր Մուշեղին, որ հավասարվել է հեթանոսներին: Գրիգոր Նարեկացին անհուն ատելությամբ ու զայրույթով, իրեն հատուկ հախուռն պատկերավոր, բարձրարվեստ գրելաոճով բնութագրում է թոնդրակյան տխրահռչակ գործիչներին, անիծում քրիստոնեական հավատքի, հայոց առաքելական եկեղեցու անողոք դավադիրներին, մարդակեր գազաններ կոչում նրանց: «Որք են շարք շանց և գումարք գողոց, և գունդք գայլոց և դասք դիւաց, և ազգինք աւազակաց, և կոյտք կերչաց, և բոյլք բարբարոսաց և խումբք խաչահանուաց, և ժողովք չարեաց և արք արեանց, և երամք թունաւոր աւձից և վտառք մարդադէմ գազանաց, և կաճառք կախարդասարաս աղանդաւորաց, և ոչ միայն եկեղեցականաց, այլև հեթանոսաց են անգոսնելիք»[22]:

Գրիգոր Նարեկացին Կճավա վանքի վանահորը ուղղված այս «Թղթում» պատմական թանկագին տեղեկություններ է հաղորդում նաև իր ուսուցչի և ազգակցի, մեծ գիտնական, կրթական լուսավորական շարժման գործիչ, Նարեկա վանքի հռչակավոր դպրոցի հիմնադիր Անանիա Նարեկացու հակաթոնդրակյան գործունեության մասին: Գ. Նարեկացին իր զարմանքն է հայտնում Կճավա վանքի վանահորը թե այդ ինչպե՞ս է, որ Նարեկա վանքի առաջնորդի թոնդրակյան աղանդի դեմ գրած հայտնի «Մատեանից» հետո, որտեղ մերկացվում են թոնդրակյան գործիչների բոլոր մոլորությունները և ուղիներ նշվում այդ աղանդը սանձազերծելու համար, և այսուամենայնիվ, դեռևս Կճավա վանքի նման հոգևոր տաճարում հանդես են գալիս նման մոլորություններ. «Արդ այսոքիկ հօրեղբայրն մեր և վարդապետ,— գրում է Գրիգոր Նարեկացին,—մեծաւ քննութեամբ խնդիրս արարեալ, իբրև զԱստուծոյ ջատագով և անդուտին իբր զիմաստուն նախամարտիկ տապալեաց զառասպելարան հայհոյութիւն անաւրինելոցն թոնդրակեանցն, թէ ո՛չ եմք զանուն պղծոցն ի համբաւուց ի սակաւ ինչ լրոյ գիտէաք»[23]: Գրիգոր Նարեկացին իր «Թղթում» կրկին ու կրկին, մերթ՝ զայրույթով, մերթ՝ թախանձագին հորդորում է Կըճավա վանքի առաջնորդին, թե՝ «Մի՛ք խուսափիլ, մի՛ք դժուարանայ, ի սէր Քրիստոսի ձեր մէջ պէտք է լեռնանայ ատելութեան կրակը ընդդէմ պիղծ աղանդաւորների և որ այդ գործում թող ձեզ առաջնորդի հայր Անանիայի «Ընդդէմ հերձուածողաց» գրած մատեանի խորհուրդը»: «Եւ արդ,— գրում է դարձյալ Գրիգոր Նարեկացին,—Տէր հայր, մի՛ դժուարիք ընդ բանս գրոյդ, և զանխարդախ սէրդ՝ ատելութիւն վարկանիք, զի սէրն Քրիստոսի ստիպէ՛ զմեզ յայսոսիկ, և կամիմք զձեզ անբիծս լինել. և զհաւրն Անանիայի զլիագիտութեամբ զմատեանսն, որ ընդդէմ հերձուածողացն՝ հոգս տարեալ գրեաց, և դուք գրել հրամայեցէք»[24]: Ըստ երևույթին Անանիա Նարեկացու «Ընդդէմ հերձուածողաց» մատյանը՝ «զմատեանս ըզլիագիտութեամբ» (ինչպես նկատում է Հ. Բ. Սարգսյանը), մի ծանրակշիռ լիարժեք և ազդեցիկ գիրք է եղել, որը դժբախտաբար չի պահպանվել և հենց այս պատճառով հայագիտության մեջ բազմաթիվ թյուրիմացություններ են ծագել: Անանիա Նարեկացու կյանքի վերջին տարիներին գրած «Գիրք խոստովանութեան» աշխատությունը, ուր հեղինակը մի վերջին անգամ անիծում է

---

[21] **Հ. Բ. Սարգսյան**, նույն տեղում, էջ 114:

[22] **Հ. Բ. Սարգսյան**, նույն տեղում, էջ 113:

[23] **Հ. Բ. Սարգսյան**, նույն տեղում, էջ 111:

[24] **Հ. Բ. Սարգսյան**, նույն տեղում, էջ 117:

թոնդրակյան աղանդավորներին, դիտվել է իբրև հեղինակի զղջման խոսք և շփոթվել նրա շատ տարիներ առաջ գրած «Ընդդէմ հերձուածողաց» մատյանի հետ: Բնականաբար եթե հայագետները ծանոթ լինեին Գրիգոր Նարեկացու Կճավա վանքի վանահորը ուղղված վերոհիշյալ «Թղթին», այդ թյուրիմացությունը տեղի չէր ունենա: Սակայն տեղի է ունենում ճիշտ հակառակը. բանասիրական թյուրիմացությունների ցանցը ավելի քան խճճվում է Գրիգոր Նարեկացու թոնդրակյան շարժման նկատմամբ ունեցած վերաբերմունքի և հարակից այլ հարցերում: Ուշագրավ է և ոչ զարմանալի, որ նախախորհրդային և խորհրդային շրջանների հայագետները թոնդրակյան շարժման գնահատման հարցում հանդես են բերում գրեթե միանգամայն հակադիր, իրարամերժ հայացքներ: Նախախորհրդային հայագետները՝ Հ. Նալյան, Մ. Զամչյան, Ղ. Ալիշան, Մ. Օրմանյան, Բ. Սարգսյան, Մուրացան և այլք թոնդրակյան շարժման մասին գրած իրենց մեծ ու փոքր ուսումնասիրություններում քննադատում, մերժում են թոնդրակյան աղանդավորական շարժման գաղափարախոսությունն՝ ամբողջությամբ: 8—11-րդ դարերի սկզբնաղբյուրների հիման վրա, պատմական հավաստի փաստերով նրանք ներկայացնում են թոնդրակյան շարժման պատմությունը և մերժում նրանց գաղափարախոսությունը իբրև հայոց միասնական եկեղեցու դեմ ուղղված գաղափարախոսություն: Դրան հակառակ խորհրդային շրջանի մի շարք գիտնականները հակադրվում են նախախորհրդային հայագետներին, անվստահություն հայտնում 8—11-րդ դարերի սկզբնաղբյուրների նկատմամբ և ճիշտ հակառակ դիրքերից արժեքավորում են աղանդավորական բոլոր շարժումները, իսկ թոնդրակյան շարժումը, գնահատում իբրև «դեմոկրատական», «առաջադիմական», «հեղափոխական», մերթ՝ գյուղացիական, մերթ՝ քաղաքային շարժում..., որոնց դեմ իբրև թե անհիմն պայքարել են պահպանողական, հետադեմ ուժերը:

Խորհրդային շրջանի հայագիտության մեջ թոնդրակյան շարժման գնահատման հարցում եղած թյուր հակասություններն ու շփոթը պատճառաբանվում է մի շարք հանգամանքներով: Առաջինը և ամենակարևորը այն է, որ ժամանակն էր այդպես թելադրում... և հայագետները հարմարվում էին, բնականաբար, ժամանակի ոգուն ու պահանջներին: Երկրորդ պատճառը այն է, որ խորհրդային հայագետներից շատերը նույնիսկ ծանոթ չեն եղել Նարեկացու Կճավա վանքի վանահորը գրած «Թղթին», ոմանք էլ լսել են, որ կա մի այդպիսի «Թուղթ» և առանց կարդալու հեռվից հեռու «վանական Գրիգոր Նարեկացու» մասին իրենց կանխակալ հայացքներին են հարմարեցրել «Թղթի» բովանդակությունը: Երրորդ և առավել ցավալի պատճառն այն է, որ նրանցից շատերը չեն փորձել նույնիսկ անդրադառնալու Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկու շոշափված դավանաբանական հարցերին, որոնք այնքան հմտորեն բացահայտում է Հակոբ Նալյանն իր «Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» վիթխարածավալ աշխատության մեջ: Իսկ Նալյանից դարեր առաջ՝ «Նարեկի լուծմունքի» հեղինակները, ինչպես ցույց է տալիս Պ. Խաչատրյանը...:

Եթե թոնդրակյան աղանդավորական շարժման դեմ Գրիգոր Նարեկացու մղած արդարացի, ճշմարիտ պայքարի արձագանքները «Մատեան ողբերգութեան» երկի էջերում տեսնելու և տպագիր խոսքով մատուցելու համար պարտական ենք Պոլսո պատրիարք, գիտնական, բանաստեղծ, մեկնիչ Հակոբ Նալյանին, ապա նույն աղանդի դեմ Նարեկացու գրած առաջին ամբողջական աշխատության՝ Կճավա վանքի վանահորը ուղղված «Թուղթը» հայագիտությանը մատուցելու համար պարտական ենք Մխիթարյան հայագետ Հ. Բ. Սարգսյանին: Վերջինիս ծանոթ չի եղել «Մատեան ողբերգութեան» երկի հակաթոնդրակյան բանքերի նալյանական վերլուծությանն ու գնահատությանը: Իսկ Նալյանն իր հերթին, գաղափար չի ունեցել Կճավա վանքի վանահորը

Նարեկացու գրած «Թղթի» մասին: **Հայագետները ևս չեն նկատել նրանց կատարած գործի միջև եղած կապն ու հարակցությունը:** Ինչպես նկատեցինք, Գրիգոր Նարեկացու թոնդրակյան շարժման դեմ գրած վերոհիշյալ «Թուղթը» առաջին անգամ հանգամանորեն քննում և մեկնաբանում է Ս. Ղազարի միաբան-անվանի գիտնական Հ. Բ. Սարգսյանը. «Ուսումնասիրութիւն Մանիքեայ-Պաւղիկեան թոնդրակեցիներու աղանդին և Գրիգոր Նարեկացու «Թուղթը» (տըպագրված Վենետիկում, 1893 թվականին): Հ. Բ. Սարգսյանի սույն աշխատությունը աղանդավորական շարժումների պատմության վերաբերյալ (Նարեկացու հետ կապված) առաջին ամբողջական, քննական և աղբյուրագիտական աշխատությունն է (կրկնում ենք) Հակոբ Նալյանի վերոհիշյալ մեկնությունից հետո, նրանից անկախ: Շուրջ 120 մեծադիր-մանրատառ էջերի մեջ մանրամասն ծանոթագրություններով հայագետը Մանիքյան-պավլիկյան և թոնդրակյան աղանդների մասին հին և նոր, ազգային և օտար, ձեռագիր և տպագիր աղբյուրների հիման վրա ամբողջացնում է աղանդավորական շարժումների պատմությունը՝ հարընտացնելով այն Գրիգոր Նարեկացու «Թղթի» ընձեռած նորագույն փաստերով: Մխիթարյան հայագետը մեծ ջանք և սեր է ներդրել հանճարեղ Գրիգոր Նարեկացու բարդ, վսեմաշուք լեզուն և ոճը, խորը փիլիսոփայական մտքերը պարզաբանելու հարուստ ծանոթագրություններով հանդերձ: Անտարակույս մատենագետը Նարեկացու «մեծարժեք թղթի» համար բացում է նոր մուտք թոնդրակյան շարժման պատմության ուսումնասիրության համար: Մի կողմ թողնելով Հ. Բ. Սարգսյանի «Ուսումնասիրութիւն» աշխատության ընդհանուր քննության և գնահատության հարցերը, մենք այստեղ փորձենք սեղմ գծերով անդրադառնալու մատենագետի հայացքներին՝ միայն թոնդրակյան աղանդավորական շարժման առնչությամբ: Հ. Բ. Սարգսյանը 8—11-րդ դարերում հայ իրականության մեջ գոյություն ունեցող վերոհիշյալ աղանդների գաղափարական հարակցություններն ու փոխազդեցությունները քննության ենթարկելուց հետո գալիս է այն հիմնական եզրակացության, որ շուրջ 200 տարի տևող թոնդրակյան աղանդավորական շարժումը ուղղված լինելով քրիստոնեական հավատքի, առաքելական եկեղեցու դեմ, միա՛յն և միա՛յն վնասել է հայ ազգային եկեղեցու և հայրենիքի միասնության և առաջադիմության գործին և բնականաբար պետք է ոչնչացվեր հայոց վերածնունդի, առաջադեմ շարժման՝ ղեկավար ուժերի պայքարի գործնական միջոցներով: Գրիգոր Նարեկացու «Թուղթը» ահա, նպաստել է այդ պայքարին:

Նարեկացու «Թղթի» 14 կետերից բաղկացած հարցադրումները, մեկնաբանություններն ու ընդհանրացումները թոնդրակյան աղանդի վերաբերյալ իրավունք են տալիս Հ. Բ. Սարգսյանին եզրակացնելու, որ հիրավի այդ աղանդը, իր նախորդների շարունակությունը լինելով, չունի իր մեջ հայոց ազգային հավատքի, նրա բարոյական չափերի հետ ոչինչ ընդհանուր կապ և առընչություն. «Գ. Նարեկացին իսկ, որուն սրբութեան հոտը՝ ինն դարուց հետ իբրև խունկ անուշ կը զմայլեցնէ զմեզ, և ամէն հայի սիրտ անուշահոտութեամբ կը լեցնէ, չազատուեցաւ անոնց անբաստանութենէն, բայց եթէ գրելով ինքն իր ջատագովական թուղթը,—թէպէտ և ազգային պատմագիրները խորովեալ աղաւնիներու հրաշքով կենդանանալուն և թռչելուն կ'ընծայեն զայն: Կճավայ վանից առաջնորդն և ուրիշ անձինք ևս, անբաստանուած էին իբրև համախոհ թոնդրակեցւոց, զոր Գրիգոր իր թղթին մէջ կը յիշէ և կը մեղադրէ եղած անբաստանութեամբք: Հաւատաքննութեան բացուած ատեանը կարի անաչառ էր՝ դատելու երբեմն և զարդարն՝ ընդ մեղաւորին, և ո՛վ գիտէ, թէ քանի՞-քանի՞ ջերմ ուղղափառներ իբրև կեղծաւոր թոնդրակեցիներ չդատեցան ի հուր, ի սուր և յաքսոր»[25]: Ի դեպ հենց այստեղ անհրաժեշտ է հիշել «Յայսմաւորքի» (Գր. Խալաթյանի գրչությամբ. տպ. 1856 թ.) հիշատակարանի այս պատմության

[25] **Հ. Բ. Սարգսյան**, Ուսումնասիրութիւն..., էջ 74:

հետ կապված տողերը, մեկընդմիշտ համոզվելու համար, որ Գրիգոր Նարեկացին, ինչպես և իր ուսուցիչը՝ գիտնական Անանիա Նարեկացին, ո՛չ թե իրապես հարել են թոնդրակեցիներին, կամ դուցզն համակրել նրանց շարժումը (ինչպես կարծում են խորհրդային հայագետներից ոմանք), այլ հետևողականորեն մաքառել են թոնդրակյան շարժման ժամանակակից գործիչների, և եկեղեցական դասի հետադեմ ուժերի դեմ և հալածվել իբրև «ծայթ»: Այս մասին ևս տպագիր խոսքով (առաջին անգամ) հանդես է գալիս Հակոբ Նալչյանը «Մատեանի» մեկնությանը կից իր ծանրակշիռ առաջաբանում. «Իսկ արտաքոյ գրեցելոցս պատմին և այլ սքանչելիք եղեալ ի սրբոյն Գրիգորէ, քանզի յորժամ իբր և զծայթ կամէին ոմանք ի նախանձոտաց նսեմացուցանել զպայծառ անուն նորա, յղեցին զոմանս ի կոչել զնա առ պատասխանատրութիւն»[26]: Եթե Նալչյանը Նարեկացու հակաթոնդրակյան գաղափարախոսությունը ներկայացնում է «Մատեան ողբերգութեան» ընձեռած դավանաբանական նյութի հիման վրա՝ զուգակցելով պատմական գործիչների սկզբնաղբյուրների փաստական նյութին, ապա Հ. Բ. Սարգսյանը, անկախ Նալչյանից Նարեկացու հակաթոնդրակյան պայքարը ներկայացնում է նրա գրած «Թղթի» ընձեռած նյութով, զուգակցելով 10—12-րդ դարերի նշանավոր գործիչների՝ Անանիա Նարեկացու, Գրիգոր Նարեկացու, Ար. Լաստիվերտցու, Գր. Մագիստրոսի, Ն. Շնորհալու և այլոց աշխատությունների ընձեռած համապատասխան նյութերին: Այս կերպ Հ. Բ. Սարգսյանը բացում է, ահա, Անանիա և Գրիգոր Նարեկացիների թոնդրակյան աղանդի դեմ մղած սկզբնական շրջանի պայքարի պատմության հաստ ծածկույթը, և ներկայացնում է աղանդավորական շարժման դեմ նրանց պայքարի այն շրջանը, որին անծանոթ էր Հակոբ Նալչյանը: Հայագիտությունը այժմ արդեն կունենա հստակ պատկերացում թոնդրակյան աղանդավորական շարժման պատմության մեջ Գրիգոր Նարեկացու և Անանիա Նարեկացու կատարած բացառիկ դերի և նրանց մղած շարունակական պայքարի մասին:

«Գիր խոստովանութեանը»,— գրում է մասնագետ Հ. Բ. Սարգսյանը,—բնաւ պէտք չէ շփոթել թոնդրակեցւոց դէմ (Անանիա Նարեկացու) գրած (դեռևս 935 թվականի) երկասիրութեան հետ, որ բոլորովին տարբեր սեռի գրութիւն մ'էր և արժանաւոր գլուխ գործոց Նարեկա մեծանուն վանահօր», որի մասին ինքը ևս հիշատակում է իր բոլորին / ծանոթ «Գիր խոստովանութեան» երկի վերջաբանի մեջ: «Ի բոլոր սահմանեալ անբարիշտացն դաւանութեանց հեռի գոլով, ըստ յառաջագոյն գրելոց վասն նոցա»... «թէ Անանիա այն գրուածով եղև իբր նախամարտիկ և առաջին տապալիչ թոնդրակեցւոց մոլորութիւններու. թէ անկից վերջ եկող մատենագիրք, այսինքն է՝ Գր. Նարեկացի և Գր. Մագիստրոս և այլք Անանիայի այն գրութենէ իբր ի ճոխ ամենազէն զինարանէ առին յետոյ իրենց զենքերը և պատերազմեցան թոնդրակեցի մոլորեցուցիչներու դէմ»[27]: Բացի դրանից «Գիր խոստովանութեան» մեջ զղջման զգացումն ուժեղ չէ, ինչպես կարծում է Էջմիածնի Միաբանը՝ միամտորեն, այնտեղ կա անեծք, զայրույթ, քննադատություն, հանդիմանություն, գուցե և խղճահարություն մոլորյալների նկատմամբ: Միաբանի սխալ մեկնաբանությունը մեծ վրդովմունք է պատճառել նաև մեծանուն գրող Մուրացանին: «Նոր դարում» Մուրացանը հանդես է եկել «Թոնդրակյան աղանդը և Էջմիածնի մի միաբանի այդ ա-

---

[26] **Հակոբ Նալչյան**, Մեկնութիւն աղօթից... Առաջաբան, էջ 14: Հենց այստեղ հարկ ենք համարում նկատել, որ «ծայթ» բառը Նարեկացու անվան հետ է կապվում միայն վերոհիշյալ գրույցում. մեր հայագետներից ոմանք, հենվելով այդ խոսքի վրա թոնդրակյան են դարձնում Նարեկացուն, մինչդեռ թոնդրակյանները «ծայթ» չեն կոչվել և թոնդրակյանների շուրջ որևէ գրույց հայագիտությանը հայտնի չէ: Նարեկացուն «ծայթ» են կոչել «սապո և բերդ» «տգետ», «սահմանափակ» կղերականները, իսկ «ծայթ» նշանակում է «հունադավան», «այլադավան» հայ: Այս առումով գրույցը լիապես կողմնորոշում է և ենթադրություններն ավելորդ են: Այս հարցին հանգամանորեն կանդրադառնանք մի այլ առիթով:

[27] **Հ. Բ. Սարգսյան**, նույն տեղում, էջ 6:

դանդի մասին արած ակնարկը» խորագրով ընդարձակ հոդվածով և ինչպես ասում են՝ քարը քարի վրա չի թողել: Թոնդրակյան շարժման պատմությունը սեղմ և ամբողջական գծերով ներկայացնելուց հետո, Մուրացանը իր զարմանքը և զայրույթն է հայտնում Միաբանի ոգևորության համար. «Լավ է, որ այդ կորած գրությունը տպել է Արարատը,—գրում է Մուրացանը,—բայց վատ է, որ սխալ է մեկնաբանել և թյուրիմացության մեջ է ձգել ընթերցողին: «Թոնդրակեցությունը,— գրում է Մուրացանը,— երկու դարուց ավելի նպատակն է ունեցել բաժանել և պառակտել ամեն միաբանություն, խանգարել ամեն կարգ ու կանոն, քայքայել ընտանիքը, պղծել նրա սրբությունները, միով բանիվ ճշմարիտ քրիստոնեությունը ոչնչացնելով պատվաստել նրա տեղը հեթանոսություն... Ուրեմն պարծենա՞նք նրա համար, որ մեր մեջ էլ մարդիկ են եղել, նոր մտքերով կամեցել են քրիստոնեական եկեղեցին քայքայել... բայց հերետիկոսներով ո՞ր ազգն է պարծենում... Մի՞թե հունական եկեղեցին պարծենում է ֆրինգաններով, մի՞թե Հռոմը կարող է երբևէ պարծենալ Մորմոնների աղանդով, մի՞թե Էջմիածինը պետք է պարծենա թոնդրակեցիներով»[28]: Մեծ վիպասանը լավատեղյակ է թոնդրակյան աղանդի ողջ պատմությանը, քանի՝ որ այն համընկնում է «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի ժամանակաշրջանի հետ: Վեպում ակներևաբար արտացոլվում է այդ պատմությունը:

Ուշագրավ է նաև՝ այն, որ Հ. Բ. Սարգսյանը, առավել քան որևէ այլ մատենագետ, արմատապես ուսումնասիրելով 8—11-րդ դարերի հայ աղանդավորական շարժումների պատմությունը, նոր լույս սփռելով մանիկյան-պավլիկյան թոնդրակյան աղանդների պատմության վրա, մատնացույց անելով նրանց գործունեության տխուր հետևանքները, խորապես ճիշտ գնահատելով նրանց հակաքրիստոնեական, հակաազգային բնույթը, միաժամանակ ո՛չ թե թերագնահատում, արհամարհում է այդ շարժումները, այլ ընդգծում նրանց անխուսափելիությունը: Եթե թոնդրակյան աղանդը գոյատևել է շուրջ 200 տարի,—գրում է նա,—նշանակում է այն ունեցել է իր պատմական հողը, օտար, արաբական, հունական, պարսկական, հին և նոր աղանդների գաղափարների ծլարձակման ու հարատևության արգասիք է այն,—նկատում է մատենագետը,—և չի կարելի թերագնահատել: Խնդիրը ոչ միայն այն է, թե ինչ էր ներկայացնում թոնդրակյան շարժումը, այլ նաև այն թե ո՛րն էր նրա գաղափարախոսությունը և օգտակա՞ր էր այն արդյոք ժամանակակից հայ կյանքի համար...: Պատմական այն իրադրության մեջ, երբ հայոց ազգի միակ հեռանկարային ուժը (հավատքի և հայրենիքի առաջադիմության համար) քրիստոնեությունն էր, առաքելական, ընդհանրական եկեղեցին և թոնդրակյան շարժման գործիչները պայքարում էին այդ գաղափարի դեմ, ուրեմն նրանց պայքարը ուղղված էր հայոց ազգային հավատքի և հայրենիքի դեմ: Այս է ճշմարտությունը: Ահա թե ինչու հայոց քրիստոնեական հավատքի, հայոց առաքելական եկեղեցու և պետական, իշխանական բոլոր դասերի առաջադեմ, լուսամիտ գործիչները մաքառում են թոնդրակյան շարժման դեմ՝ սկզբից մինչև վերջ...: 10-րդ դարում, ահա, այս նույն առաջատար դիրքի վրա է կանգնած եղել Նարեկա վանքը և այդ դիրքից է Գրիգոր Նարեկացին գրում իր սքանչելի «Թուղթը»՝ Կճավա վանքի վանահորը և խնդրում, որ նա նվ գրի հատուկ թուղթը, քանի որ ըստ էության թոնդրակյան աղանդը, առավել քան վտանգավոր է եղել... Հենց այդ ժամանակներում: Ի տարբերություն նախորդ աղանդների, թոնդրակեցիները,—գրում է Հ. Բ. Սարգսյանը,—մերժում էին քրիստոնեական ուսմունքը և հայոց եկեղեցին ամբողջությամբ: Մինչդեռ պավլիկյանները «Կ'ընդունէին մարդկութեան անակնկալ վիճակին հետ նաև բարի Աստծոյն... կը կատարէին գէթ ըստ ձևոց և արարողութեան եկեղեցւոյ խորհուրդներէն զոմանս, և ունէին իրենց

[28] «Նոր դար», 1892, № 33, 35:

համար հաւատալիս և հաւատապատումս. իսկ թոնդրակեցիք, ընդհակառակն զայս ամենայն կեղծիք կը համարէին և կը ծաղրէին... որով Սմբատէն զատ չկար ուրիշ հոգի շնորհաց և յուսոյ բարութեան: Թէ Մանիխեցիք և թէ Պաւղիկեանք գէթ չափով մը կ'ընդունէին Նոր Կտակարանն և անոր հեղինակութիւնը, իսկ թոնդրակեցիք Սմբատէն և անոր յաջորդներէն դուրս ուրիշ ոչ հեղինակութիւն կը ճանչնային և ոչ իսկ սրբազան հեղինակս, զի քակած էին առհասարակ Առաքելոց և Մարգարէից հիմունքը, հետևվաբար՝ քաղաքական՝ եկեղեցական օրէնք և օրէնդրութիւն իսկ անոնց համար բռնաւորութիւնք էին: Միոյ բանիւ,—ընդհանրացնում է մատենագետը,—նորահնար բառիս ճիշտ նշանակութեամբ, հին աշխարհի ճըշմարիտ ոչնչականներ էին... ընկերավարականներ... Անկրօնք և անաստուած էին ոչ միայն ի գործնականին, այլև տեսական ըսկզբամբք»[29]: Ըստ պատմիչների, ընդհանրացնում է Հ. Բ. Սարգսյանը, Սմբատը թոնդրակյան շարժման հիմնադիրը, օժտված էր «մոգութեան և կախարդութեան կրկնակի արուեստագիտութեամբ, և արտաքին ձգիչ կերպին հետ ունէր նաև վերին աստիճանի ճարտասանական հմայիչ և պատող զօրութիւն մըն ալ»: «Իր մոլորեցնող կախարդական արուեստով,—շարունակում է հայագետը,—նա այլասեռում է երիտասարդութեանը, ընտանեկան, հասարակական, հանրային կեանքն ու կենցաղը»: Ահա թե ինչու Նարեկացին ի լուր աշխարհի թոնդրակեցիներին և նրանց առաջնորդներին կոչում է **«գունդ գայլոց և դաս դիւաց...»**:

Թե երբ է Գրիգոր Նարեկացին գրել Կըճավա վանքի վանահորն ուղղված այս «Թուղթը» որոշակի հայտնի չէ: Ակներև է, սակայն որ Գրիգոր Նարեկացու «Թղթի» վրա շատ ուժեղ է Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոց» մատյանի ոգու ազդեցությունը: Գր. Նարեկացու համապատասխան տողերից հստակ չի երևում, թե «Թուղթը» գրելիս կենդանի՞ էր արդյոք իր սիրելի ուսուցիչը: Նարեկացին իր «Թղթում» երեք անգամ հիշատակում է մեծ գիտնականի անունը, թվում է, որ եթե Անանիան վախճանված լիներ, Գրիգոր Նարեկացին որևէ ձևով, կամ բացորոշ եղանակով իր հույզն ու վիշտը կարտահայտեր թանկագին ուսուցչի մասին: Ուրեմն կարելի է մըտածել, որ Գրիգոր Նարեկացին իր «Թուղթը» գրել է Անանիա Նարեկացու կենդանության օրոք, մինչև 986 թվականը: Դա անհավանական չէ, քանի որ, ինչպես հայտնի է, Գրիգոր Նարեկացին թոնդրակյան աղանդի դեմ իր խիստ քննադատական վերաբերմունքն է արտահայտում նաև «Ապարանից խաչի» ներբողում, և «Երգ երգոցի մեկնութեան» մեջ (որը նա գրել է 977 թվականին): Ուրեմն, Անանիա և Գրիգոր Նարեկացիները իրենց հակաթոնդրակյան, առաջավոր գործունեությունը սկսել են համատեղ: Ինչպես արդեն նկատեցինք, Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկում թանձրացած հակաթոնդրակյան հայացքներն ունեցել են իրենց զարգացման պատմական ուղին, ընթացքը: Հետևաբար, 10-րդ դարի թոնդրակյան աղանդավորական շարժումների դեմ Անանիա և Գրիգոր Նարեկացիների մղած պայքարը սկզբից մինչև վերջ, եղել է ինքնաբուխ, անկեղծ, հետևողական, անզիջում: Այդ պայքարը միայն և միայն եղել է առաջադիմական և պատմականորեն անխուսափելի... Գր. Նարեկացին իր սիրելի ուսուցչի մահից հետո շարունակել է պայքարը նույն ուժով, այս անգամ նաև իր հանճարեղ «Մատեան ողբերգութեան» երկի միջոցով:

Ժամանակակից հայագիտության մեջ թոնդրակյան շարժման դերն ու նշանակությունը գերագնահատելու մղումով, մեր գիտնականներից ոմանք հենվում են Ֆ. Էնգելսի հայտնի դրույթի վրա, թե՝ Միջնադարում բոլոր ընդհանուր բնույթ կրող հարձակումները կատարվում էին ֆեոդալիզմի և եկեղեցու դեմ և որ այդ պայքարը ներկայացնում է մերթ որպես միստիկա, մերթ որպես հերետիկոսություն, մերթ որպես զինված ապըստամբություն: Թերևս այդ այդպես է,

[29] **Հ. Բ. Սարգսյան**, նույն տեղում, էջ 66:

սակայն ամեն մի ազգ միջնադարյան կյանքի իր առանձնահատկությունն ունի և այս դեպքում, այսպես կոչված թոնդրակյան օպոզիցիան, 9—11-րդ դարերի հայոց կյանքի համար չէր կարող շարժիչ լծակ լինել: Նույն հայագետները, սակայն, մոռանում են այն դրությը, որը առավել քան բնութագրական է միջին դարերի կյանքի համար. «Միջին դարերի աշխարհայացքը,—գրում է Էնգելսը,—գերազանցապես քրիստոնեական էր, եվրոպական աշխարհը փաստորեն զուրկ է ներքին միասնությունից և քրիստոնեության միջոցով է պայքարում ընդդեմ արտաքին թշնամու»[30]: Այս ընդհանրացումը վերաբերում է նաև քրիստոնյա հայոց անցյալին առհասարակ, և հատկապես Նարեկացու ժամանակներին: Ինչպես արդեն նկատեցինք, 10-րդ դարում հայ հոգևոր, կղերամիտ և հետադեմ, պահպանողական իշխանական դասերի, դրանց հետ միասին արտաքին և ներքին, օտար բռնակալական պետությունների և դեռևս ուժեղացող թոնդրակյան աղանդավորների պայքարը, միասին՝ ուղղված էր հայոց քրիստոնեական եկեղեցու դեմ ամբողջությամբ, եկեղեցու պետական հեղինակության, նրա նյութական շինվածքի, բարոյագիտական ծեսերի և արարողությունների դեմ: Ուրեմն հենց միջին դարերում հայոց վերածննդի գաղափարով ոգեկոչված առաջադեմ գործիչները պետք է առաջնորդվեին քրիստոնեական գաղափարախոսությամբ՝ նաև ընդդեմ աղանդավորական, անհեռանկարային շարժումների: Ահա թե ինչու, Կճավա վանքի վանահորը ուղղված իր «Թղթում» Գրիգոր Նարեկացին ցավով, մեկ առ մեկ նշում է քրիստոնեական եկեղեցու դեմ ուղղված թոնդրակեցիների ծրագրային պայքարի բոլոր հարցերը և հակադրում նրանց դավանաբանական այն օրենքները, որոնցով առաջնորդվում էր քրիստոնյա առաքելական եկեղեցին:

Այս մասին Նարեկացին հանգամանորեն գրում է, ինչպես նշեցինք, նաև իր «Մատեանի» ԼԴ և ՀԵ, ՂԱ բանքերում. «Խոստովանիմք և դաւանիմք, պաշտեմք և երկրպագեմք զուգափառ միութիւն ամենասուրբ Երրորդութեանն». Նարեկացին իր խոսքը ուղղելով թոնդրակյան աղանդի դեմ, հետևողականորեն շարադրում է հայ քրիստոնյա բանաստեղծ իմաստասերի իր հայացքները, բնութագրում «Ամենագովելի Մայր եկեղեցու անարատ, խնկելի Դշխուհուն», և սերունդների առաջ մեկնաբանում նրա դավանանքի կանոնները, նրա փառքը, իբրև մաքուր մարմին, որ է «Մարդացեալ բանն Աստուծոյ»: Եկեղեցին այն սուրբ տունն է, որտեղից հույսի, լույսի, միաբանության ճառագայթներ են ներթափանցում մարդ բանականի հոգին ու մարմինը և կենսունակություն տալիս նրան: Մի անհուն աշխարհ է այն, ուր արտացոլվում է համամարդկայինը և ազգայինը միահյուսված, երկնային և երկրային կյանքն ամբողջությամբ, արտաքին, առարկայական, երևութային աշխարհն իր բոլոր կողմերով, երկնայինը և երկրայինը իրենց ներդաշնակություններով և հակամարտություններով: Այս բոլորի կենտրոնում է կանգնած, ահա, Նարեկացու քնարական հերոսը, մարդ բանականը՝ իր հոգու համայնապարփակ զգացողությամբ: Հանճարեղ բանաստեղծը գծում է նրա կատարելության, վերափոխության աստվածայնացման ուղին, նրա վերածննդի քրիստոնեական բարոյագիտության ճշմարիտ ճանապարհը...: Ահա աստվածային, ճշմարիտ բարոյագիտության այս ճանապարհն էր շեղում թոնդրակյան աղանդը և դրա դեմ էր այնքան վճռաբար մաքառում հանճարեղ բանաստեղծը:

---

[30] **Մարքս, Էնգելս,** Երկեր, հատոր 6-րդ (հայերեն), Երևան, 1958, էջ 298: